ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գ. Աշոցք, Հրապարակ 1, Հեռ.
0245 2-14-82 , ashotsq.hamaynq@mail.ru

N 793

03 օգոստոս 2026թ.

«Ս.Վ.Պ.» ՍՊԸ-ի տնօրեն
Սպարտակ Վիրաբյանին
Հասցե ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի,
Վարդքաղ 1 թղմ. 1մ/շ, 5, շենք, բն 22
Հեռ. +374 99165858, էլ. փոստ shneristerjacum@gmail.com
ՀՎՀՀ 05569197

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Աշոցքի համայնքապետարանի և «Ս.Վ.Պ.» ՍՊԸ-ի միջև 2026 թվականի մայիսի 5-ին կնքվել է թափառող շների ստերջացման ծառայությունների մատուցման պետական գնման թիվ N ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-26/23 պայմանագիրը: Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Կատարողը ստանձնել է ծառայությունները փուլերով մատուցելու պարտավորություն՝ պահանջը ներկայացնելուց հետո երկու օրվա ընթացքում: Այդուհանդերձ, Կատարողը սահմանված ժամկետներում չի մատուցել Պայմանագրով նախատեսված ծառայությունները, չի արձագանքում Պատվիրատուի հեռախոսազանգերին և փաստացի չի կատարում իր պայմանագրային պարտավորությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ կատարելը, իսկ տվյալ

դեպքում Կատարողի կողմից թույլ է տրվել Պայմանագրի էական խախտում: Համաձայն Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողի կողմից խախտվել է ծառայության մատուցման ժամկետը: Հաշվի առնելով նշված հանգամանքները և ղեկավարվելով Պայմանագրի 2.1.3 և 7.11 կետերի դրույթներով՝ Աշոցքի համայնքապետարանը սույնով միակողմանիորեն լուծում է թիվ N ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-26/23 պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագրի 7.11 կետի համաձայն՝ սույն ծանուցումը հրապարակվում է պաշտոնական տեղեկագրում (www.procurement.am) և Կատարողը համարվում է պատշաճ ծանուցված պայմանագիրը լուծելու վերաբերյալ՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

Աշոցք համայնքի ղեկավար՝ Կարեն Մանուկյան